Հավելված N 1
ՀՀ կառավարության 2021 թվականի
հուլիսի 15-ի N 1139 - Լ որոշման

Մ Ի Ջ Ո Ց Ա Ռ Ո Ւ Մ
ՌԱԶՄԱԿԱՆ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ՝ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ՏԵՂԱՎՈՐՎԱԾ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1. Միջոցառման նպատակն է օժանդակել ռազմական դրությամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած տնտեսավարողներին՝ վերջիններիս կողմից կացարանների տրամադրման արդյունքում առաջացած գույքային վնասները փոխհատուցելու և գործունեության վերկանգնմանն աջակցելու նպատակով:

2. Միջոցառման շահառու են ռազմական դրությամբ պայմանավորված՝ Սյունիքի մարզում ժամանակավորապես տեղավորված Արցախի Հանրապետության քաղաքացիներին կացարան տրամադրած, փաստացի գործունեություն իրականացնող այն հանգստյան տները, հյուրանոցները և հյուրատները, որոնք ընդգրկված են եղել ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 23–ի N 1822–Ն և 2020 թվականի դեկտեմբերի 08–ի N 1987–Ն որոշումների շրջանակներում օժանդակություն ստացած շահառուների ցանկում (այսուհետ՝ շահառու):

3. Օժանդակության չափը հաշվարկվում է հետևյալ բանաձևով, բայց ոչ ավելի, քան տվյալ շահառուի՝ 2019 թվականի Կենտրոնական գանձապետական հաշվից իրականացված մարումները՝

ԱՉ = ՀՔ*ՕՔ*ՄԱ*0.4–ԿՓ-Օ

Սույն կետի կիրառության նպատակով՝

1) **ԱՉ**-ն պետության կողմից տրամադրվող աջակցության չափն է.

2) **ՀՔ**-ն շահառուի կողմից հյուրընկալված՝ Արցախի Հանրապետության քաղաքացիների թվաքանակը, որը սահմանված է՝ հիմք ընդունելով ՀՀ կառա-

վարության 2020 թվականի նոյեմբերի 23–ի N 1822–Ն և 2020 թվականի դեկտեմբերի 08–ի N 1987–Ն որոշումների շրջանակներում օժանդակություն ստացած շահառուների ցանկերը.

3) **ՕՔ**-ն աջակցության ամսվա (2020 թվականի հոկտեմբեր) օրերի քանակն է.

4) **ՄԱ**-ն հոկտեմբեր ամսին շահառուների կողմից հյուրանոցային ծառայությունների մեկ օրվա միջինացված արժեքն է (10000 դրամ).

5) **ԿՓ**-ն ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 23–ի N 1822-Ն և 2020 թվականի դեկտեմբերի 08-ի N 1987-Ն որոշումների շրջանակներում շահառուների ստացած օժանդակության չափն է.

6) **Օ-ն** ՀՀ կառավարության 2021 թվականի մարտի 4-ի N 310-Լ որոշմամբ հաստատված միջոցառման շրջանակում ստացած օժանդակության չափն է:

1. Սույն միջոցառման շրջանակում օժանդակություն ստացած տնտեսավարողների ցանկը հրապարակվում է Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքէջում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

15.07.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ